

ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

« 16 » 02 2024 թ.

(ստորագրություն)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ,
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության
գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման
քաղաքականությունը**

1. Քոլեջի գործունեության պլանավորումը

1.1 Քոլեջի գործունեության պլանավորումը գործընթաց է, որի միջոցով ձևավորվում է կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական պլանները՝ ռեսուրսային և այլ միջոցների տեսանկյունից:

1.2 Քոլեջի գործունեության պլանավորումը պետք է ապահովի վերջինիս վերապահված գործառույթների ամբողջական և պատշաճ իրականացումը, տնտեսական կայունությունը:

2. Ֆինանսական պլանավորման ընթացակարգի նկարագիրը

2.1 Ֆինանսական միջոցների պլանավորումը բխում է Քոլեջի ֆինանսական քաղաքականության հիմնական ուղղություններից՝

- Տարեկան միջոցառումների ծրագրի կազմում,
- տարեկան միջոցառումների ծրագրի վրա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կազմում,
- համապատասխան միջոցառումների իրականացում՝ պլանային, բյուջետային, արտաբյուջետային քաղաքականության պահպանման ուղղությամբ
- Քոլեջի գործունեության արդյունքների ընթացիկ հաշվառում և վերլուծություն:

2.2 Քոլեջի ֆինանսական պլանավորումը իրականացվում է բյուջետային և արտաբյուջետային գործընթացի միջոցով:

2.3 Քոլեջի ֆինանսական պատասխանատվության կենտրոններն են կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց պատասխանատուները կազմում են և հաշվապահին են

ներկայացնում իրենց ղեկավարած ստորաբաժանման առաջիկա իրականացվելիք միջոցառումների պլանը ,պահանջվող ծախսերը, դրանց հիմնավորումները:

2.4.Հաշվապահի կողմից ուսումնասիրվում է կազմված պլանների ճշտությունը՝ դրանք համադրելով կանխատեսվող եկամուտների հետ: Անհամապատասխանության դեպքում ուղարկվում է վերանայման :

2.5.Հաշվապահը ներկայացված պլանների հիման վրա տնօրենին է ներկայացնում քուլեջի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագիծը, և ըստ ժամանակացույցի ներկայացվում է հաստատման:

3. Քուլեջի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը և դրա հիմնական գործառույթները

3.1Քուլեջի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը կայուն զարգացման պլանի ֆինանսական արտահայտությունն է:

Տարեկան նախահաշվի կարևորության գործառույթները՝

- Գործառնությունների պլանավորում, որը կնպաստի Քուլեջի զարգացմանը և անխափան գործունեությանը,
- Քուլեջի գործունեության տարբեր ուղղությունների և ստորաբաժանումների ընդհանուր կոորդինացում,
- ընթացիկ գործունեության վերահսկողություն,
- գործունեության հետազոտություն, որը կնպաստի Քուլեջի խնդիրների բացահայտմանը:

3.2 Նախահաշվի մեջ արտացոլվող տեղեկատվությունն օգտագործողի տեսանկյունից պետք է լինի հստակ, որոշակի և նպատակային:

3.3 Բյուջետավորման նպատակներն են՝

- Քուլեջի կայուն զարգացումը,
- ֆինանսա-տնտեսական գործունեության հստակ պլանավորում,
- ռեսուրսների արդյունավետ բաշխում,

- ստորաբաժանումների գործունեության վերահսկողություն և գնահատում,
- ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջմունքների բացահայտում և դրամական հոսքերի օպտիմալացում:

•

4.Քոլեջի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարման մշտադիտարկումը

4.1 Քոլեջի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարման ընթացքի մշտադիտարկումն իրականացվում է հաշվապահի կողմից:

4.2 Հաշվապահը եռամսյակային պարբերականությամբ տնօրենին և վերադասին հաշվետվություն է ներկայացնում եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարման ընթացքի վերաբերյալ:

4.3 Եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվում եկամտային և ծախսային հոդվածներում փաստացի և պլանային ցուցանիշների միջև թույլատրվում է մինչև 10 տոկոսի չափով շեղում՝ վերադասի որոշմամբ:

4.4 Շեղումների դեպքում տրվում է բացատրություն՝ հնարավոր պատճառների վերաբերյալ: